



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 75-9 - Լ

« 20 » 04 2022 թ.

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ
ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԱԶԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՍՈՎՈՐՈՂԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Այլ բուհից, ԵՊՀ այլ կրթական ծրագրից, ուսուցման համակարգից տեղափոխվելու, ուսանողական իրավունքները վերականգնելու, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից ուսումը շարունակելու, երկրորդ մասնագիտություն ստանալու համար պահանջվող առարկայական տարբերության հանձնումը, լուծարքային շրջանից հետո ակադեմիական պարտքի վերահանձնումը կատարվում է վճարովի հիմունքով՝ մեկ առարկայի համար 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ հաշվարկով:

2. ԵՊՀ առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ տեղափոխվող սովորողը պարտավոր է, տեղափոխվելու մասին դիմում ներկայացնելու օրվա դրությամբ վճարել առկա ուսուցման համակարգի ընթացիկ կիսամյակի համար սահմանված ուսման վճարի այն մասը, որը համապատասխանում է սվյալ օրվա դրությամբ մատուցված կրթական ծառայությունների չափին՝ վճարման անդորրագիրը կցվելով դիմումին:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին (ինստիտուտներին, կենտրոններին) և սովորողներին:

4. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 25-ի թիվ 187/83 հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022թ սեպտեմբերի 1-ից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ